ՀԵՍՈՒՐԱՆԱԳԱՆՆԵՐ

ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

ԱՎԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆՅԱՆՑ
(1857-1912)

Հայ մամուլի ու տնտեսագիտական մտքի պատմության մեջ խոր հետք թողած մտավորականներից էր Ավետիք Արասխանյանցը: Ազգային անշփոթելի նկարագիր, եւրոպական բարձրագույն կրթություն, արեւմուտքի եւ արեւելքի արժեհամակարգերին քաջատեղյակ, հմուտ վերլուծող ու գեղագետ՝ ճակատագիրը որքան լիառատ, շռայլ էր նրա օժտվածության հարցում, նույնքան ժուժկալ էր հաջողության դափնիների, հունձքի առումով: «Նախանձելի տոկունությամբ, հաղթահարելով նյութական ու բարոյական բնույթի բազմաթիվ դժվարություններ, նա մաքառեց իր ժողովրդի մտավոր վերելքի համար, բայց կնքեց իր մահկանացուն... ոչ մեկից չգնահատված», - կարդում ենք ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Գառնիկ Անանյանի՝ ականավոր գործչի հրապարակախոսական ժառանգությանը նվիրված գրքում[1]:

Սերում էր Ագուլիսից: Մի տոհմից, որի հնությունը ապացուցվում էր տեղի Ս. Շմավոն եկեղեցու հարեւանությամբ տարածվող գերեզմանոցի տապանագրերով: Ծնվել է 1857 թ. փետրվարի 13-ին (հին տոմարով): Տառաճանաչ է դարձել Ս. Շմավոն եկեղեցու քահանա տեր Սիմոնի հսկողությամբ: Ապա ուսումը շարունակել է Հայրապետ Քալանթարյանի, հետո վանքի, եւ, վերջապես, 1847-ին հիմնված հայոց ծիսական դպրոցներում: Իսկ այդ տարիներին Ագուլիսում ուսուցչությամբ էին «պարապում» Պերճ Պռոշյանը, Ռուբեն Ջալալյանը, Սամվել Գյուլզադյանը:

«Որպես զաւակ իր ժամանակի հարուստ ընտանիքի՝ 1870-ին հայրը դրկում է նրան Թիֆլիս, ուր հինգ ամիս պատրաստուելուց յետոյ մտնում է ռեալական դպրոցը, որ եւ աւարտում է 1876 թիւն», - կարդում ենք Արասխանյանի ինքնակենսագրականում[2]:

Ս. Պալասանյանի շնորհիվ պատանին Թիֆլիսում հայտնվում է հեքիաթային, զգլխիչ բուռն միջավայրում: Այդ շրջանում Գրիգոր Արծրունու բնակարանը վերածվել էր մտավորականների՝ Գաբրիել Սունդուկյան, Պերճ Պռոշյան, Արգար Հովհաննիսյան,

1 **Գ. Գ. Անանյան,** Ավետիք Արասխանյան, Երեւան, 1987, էջ 3:

2 **Աւետիք Արասխանեանց**, Ինքնակենսագրութիւն (գրած մեր խնդրանօք, եւ բնագիրը՝ Աղբիւր-Տարազի սեպհականութիւն), Թիֆլիս, 1912, էջ 3:

Ռաֆֆի, Սերգեյ Մեսխի (վրացերեն «Դրոբէա» թերթի խմբագիր) «գրական երեկոների» հանդիպավայրի: Այստեղ պարբերաբար քննարկում, կրքոտ վիճում, կարդում ու խորհում էին ապագայի մասին: Դպրոցն ավարտելուց հետո մեկնում է Եւրոպա՝ «քաղաքատնտեսութիւն ուսանելու, կոչումն ունենալու հրապարակախօսական եւ հասարակական գործունէութեան համար»[3]:

Երեք կիսամյակ քաղաքատնտեսություն, պատմություն, փիլիսոփայություն է ուսումնասիրել Լայպցիգի համալսարանում: 1878 թվականին Փարիզում կազմակերպված համաշխարհային ցուցահանդեսին մասնակցելու նպատակով մեկնել է Ֆրանսիա ու երկու կիսամյակ ուսանել է «Կոլեջ դը Ֆրանսում»: Հիշարժան հանգամանք է, որ Բեռլինի վեհաժողովում հայկական հարցի քննության շրջանում, Փարիզի «Temps» լրագրում իբրեւ երկրորդ առաջնորդող, անստորագիր տպագրված հոդվածը՝ այդ հարցի առթիվ, գրել էր Ա. Արասխանյանցը[4]: Հետո դարձյալ տեղափոխվում է Գերմանիա: Ընդհանրապես, այդ տարիներին շատ էր ճանապարհորդում ու մտերիմներից մեկին ուղղված նամակում խոստովանում է. «Համարեա ամբողջ Եւրոպան ման եկայ»[5]: Այս շրջագայությունները խոր հետք էին թողնում դիտարկումների, ուսումնասիրությունների, զուգակշիռների հակում ունեցող երիտասարդի հոգում:

1882-ին ավարտում է Սանկտ-Պետերբուրգի համալսարանը՝ հաջողությամբ հանձնելով դոկտորական քննությունը: «Հացի առեւտուրը Ֆրանսիայում 18-րդ դարում» ավարտաճառը եւ պարբերականներում տպագրված հոդվածները արժանացել են բարձր գնահատականի: Քաղտնտեսության ականավոր գիտակներից մեկը՝ Շմոլերը, նրան առաջարկում է մնալ Գերմանիայում, լինել իր հրատարակած ամսաթերթի օգնական խմբագիրը, դասավանդել համալսարանում: Սակայն, Ավետիք Արասխանյանը հրաժարվելով գայթակղիչ, հեռանկարային, պատվաբեր առաջարկներից, սիրելի ժողովրդին ծառայելու անկոտրում վճռականությամբ նույն՝ 1882 թ. վերադառնում է Թիֆլիս:

1883-85, 1887-88 թթ. ընդհանուր պատմություն է դասավանդում Ներսիսյան եւ Գայանյան դպրոցներում: 1892 թ. լույս է տեսնում նրա հեղինակած «Արեւելքի ազգերի հին պատմութիւն» դասագիրքը:

Մանկավարժական գործունեությանը զուգընթաց Ա. Արասխանյանը հանդես է գալիս հրապարակային դասախոսություններով, որոնցից երկու թեմա՝ «Ազգայնական եւ ազատագրական շարժումը» եւ «Հողի արտադրութիւնը եւ հարկումը» լրամշակվելուց հետո լույս են տեսել գնդապետ Ալ. Մելիք-Հայկազյանի առաջարկով եւ հոգածությամբ[6]:

Ա. Արասխանյանցը սիրում էր շրջել հայրենի երկրամասերով: Տնտեսագիտական քննություն-հոդվածներ է գրել՝ նվիրված Ագուլիսի, Նուխիի, Արեշի, Արցախի գյուղերի բնակչության կենցաղի, երկրագործության, տնայնագործության խնդիրներին: Մանրակրկիտ ուսումնասիրում էր նահանգներում փոքր արդյունագործության (մասնավորա-

3 Անդ:

4 **Աւետիք Արասխանեանց**, Ինքնակենսագրութիւն, էջ 4:

5 ԳԱԹ, «Մուրճի» արխիվ, 1-4-րդ:

6 Տես **Աւետիք Արասխանեանց**, Ինքնակենսագրութիւն, էջ 6:

պես՝ շերամապահության-մեփաքսագործության) զարգացման հնարավորությունները: Այդ հեփազոփությունների մեջ նա փասփում է, որ «...անդրկովկասյան մեփաքսարդյունաբերությունը սփանում է ապրանքակապիփալիսփական բնույթ՝ խոշոր մեքենայական արփադրության, կապիփալի եւ վարձու աշխաթանքի գործակցությամբ»[7]:

Տնփեսագեփ Արասխանյանի գործունեությունից արժե հիշաթակել նաեւ, որ 1888-ին Թիֆլիսում հիմնել է առեւփրաարդյունաբերական երկամյա դասընթաց՝ նպաթակ ունենալով մասնագեփներ պաթրաստել արդյունաբերական ձեռնարկություններում աշխաթելու համար[8]:

Սակայն, պաթանեկան շրջանից Գրիգոր Արծրունու «Մշակի» սփեղծագործական խմբի անդամը լինելով, թրծվելով այդ միջավայրի քուրայում՝ նրա համար միշփ էլ ցանկալի գաղաթար էր մնում սեփական պաբբերական հրաթարակելու միփքը: Այդ գործի կարեւորության գիփակցությունը չի լքել նրան երբեք: Սկզբում փորձեց սփանալ «Մշակի» փպագրությունը շարունակելու իրավունքը (ի դեպ, նույն ցանկությունը ուներ նաեւ Ռաֆֆին): Մինչ նրանք փորձեր կձեռնարկեին այդ ուղղությամբ, արփասահմանից վերադարձավ Գ. Արծրունին ու վերսկսեց «Մշակի» փպագրությունը, իսկ Ա. Արասխանյանին առաջարկեց լինել իր օգնականը: Սակայն գործին նվիրված երկու մեծությունների միջեւ ծագած փարաձայնությունները շաթ արագ խորացան ու վերածվեցին անհամաթեղելի հարաբերությունների՝ ընդհուպ մինչեւ անձնական շփումների կաթարյալ դադարեցումը:

Հայ մամուլի ընփանիքին անդամագրվելու եւ այդ ընփանիքի մշակը դառնալու միփքը սփիպում էր նոր պաբբերականի հիմնման ու փպագրության մասին մփածել: Սակայն, ցարական Ռուսասփանում «Նոր պաբբերականի հրաթարակության թույլփվություն սփանալը կապված էր մեծ դժվարությունների հետ: ...Առաջադիմական ամեն միփք ու արփահայփություն ճնշվում էր բացահայփ եւ ոչ բացահայփ միջոցներով: Առանձնապես ծանր էր գաղութացված ժողովուրդների դրությունը: Աննախանձելի վիճակում էր գփնվում նաեւ մամուլը: Ցարական կառավարությունը վարում էր ծայրամասերում նոր օրգանների հրաթարակություն թույլ չփալու, եղածների նկաթմամբ նոր սահմանափակումներ ու ահավոր ցենզուրայի կիրառման քաղաքականություն»[9]: Եւ այս հարցում օգնության հասան արփասահմանում սփեղծված անձնական կապերը՝ ռուս բարձրաշխարհիկ ընփանիքներից մեկի ներկայացուցչի հետ:

Դեռեւս 1880-ականների սկզբին արփասահմանում նա ծանոթացել էր դուքս. Գեորգ Գեորգիեւիչ Մեկլենբուրգ-Սփրելիցկու հետ, որը իր մոր՝ Եկաթերինա Միխայլովնայի կողմից ծոռն էր կայսր Պավելի: Հենց այդ մերձավորությունից էլ օգփվեց Ա. Արասխանյանցը՝ «Մուրճ» ամսագրի հրաթարակության թույլփվությունը սփանալու համար[10]:

Եկա՛վ սպասված պահը, 1888-ի վերջին հայ մամուլում ազդարարվում է հաջորդ

7 **Ռ. Ն. Սարինյան**, Ավետիք Արասխանյան. Տնփեսագիփական հայացքների վերլուծություն, Երեւան, 1980, էջ 14:

8 Տե՛ս անդ:

9 **Գ. Գ. Անանյան**, նշվ. աշխ., էջ 9:

10 Տե՛ս **Ավետիք Արասխանեանց**, Ինքնակենսագրութիւն, էջ 4-5:

տարվա հունվարից «Մուրճ» հանդեսի հրատարակության մասին: Դեմ եւ կողմ արտահայտվողների պակաս չէր զգացվում:

«Մուրճի» մուտքը հայ մամուլի ընտանիք ոգեւորությամբ ընդունեց, օրինակ, «Աղբիւր» հանդեսը: 1888 թ. նոյեմբերի համարում կարդում ենք. «Մի գրական- քաղաքական ամսագրին կարեւորութիւնը խիստ զգալի է, եւ մենք ուրախ ենք, որ պ. Աւետիս Արասխանեանին յաջողեց լրացնելու այդ պէտքը»[11]: Նոր հանդեսի տպագրության մասին իր ընթերցողներին իրազեկել է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Արարատ» հանդեսը՝ 1889 թվականի առաջին երեք համարների շապիկների դարձերեսներին ծանուցում զետեղելով:

Եղան նաեւ հակառակ կարծիքներ: Ցանկացած նոր պարբերականի նկատմամբ խիստ միտումնավոր, բացասական տրամադրություններով ավանդաբար աչքի ընկնող «Մշակին» սիրով ձայնակցեց նաեւ «Նոր դարը»: «Մշակը», հենց առաջին համարից սկսած, պարբերականի ստեղծողներին մեղադրում էր կյանքից կտրված լինելու մեջ: Ավելի ուշ հալածանքների, մեղադրանքների, հարկի ու անհարկի քննադատության պակաս չունեցող Արասխանյանը պետք է խոստովաներ, թե հալածվողի խաչը կրելը պարծանք ու մխիթարություն է իր համար[12]:

Սակայն, ցանկացած աշխատանքի գնահատականի լավագույն փորձաքարը ժամանակն է:

Գիտնական, մտավորական, լեզուների գերազանց իմացություն, գրելու անուրանալի օժտվածություն. սրանք լավ խմբագիր լինելու անհրաժեշտ եւ լիովին բավարար պայմաններ են: Պարբերական հրատարակելու իրավունք ստանալուց հետո Ա. Արասխանյանը խմբագրական դռները լայնորեն բացեց սկսնակ, բայց շնորհալի երիտասարդների առջեւ: Նա համոզված էր, որ ամսագրի կարեւոր առաքելությունը հենց դա է. «Ամսագիրը պատասխանատու գործ է կատարում հրատարակելով անծանօթ կամ շատ քիչ ծանօթ, հասարակութիւնից դեռեւս չճանաչուած հեղինակների վէպեր եւ բանաստեղծութիւններ... Հենց դրանում է կայանում ամսագրի ամենադրական գործը վիպասանութեան եւ բանաստեղծութեան նկատմամբ»[13]:

Մուտքը «ազատ պահել երիտասարդների առջեւ»՝ բոլորովին չէր նշանակում տպագրել ինչ պատահի (այս հարցում էլ ընդդիմադիր կեցվածք ուներ Գեւորգյան ճեմարանի ուսուցիչ Ստեփան Լիսիցյանը: Նա համոզված էր, որ քաջալերելու նպատակով պետք է տպագրել այն ամենն, ինչ ներկայացնում են երիտասարդները, իսկ հետո կերեւա, ակնհայտ կլինի, թե ով է առավել արժանավոր, օժտված, ում գործերն են մնայուն): Հեղինակների նկատմամբ Ա. Արասխանյանցի պահանջները հստակ եւ խիստ էին. «Լինել ժամանակակից ժողովրդի կեանքին մօտիկ, այդ կեանքից բխած ու նորա հասկացութեանը մատչելի»: Նյութերը պետք է լինեին. «...թարմ, գրուած սահուն լեզուով, որ նորանցից բուրէ ժողովրդի բարեկամի ոգին, բարեխիղճ հետազօտողի ճշտութիւնը,

11 «Աղբիւր», 1888, թ. 11, էջ 90:
12 Տե՛ս «Արձագանք», 1898, թ. 40, էջ 547:
13 «Մուրճ», 1893, թ. 1, էջ 159:

մտածողի վեհութիւնը, գեղարուեստագէտի ճաշակը, մտադրութիւնների շիտակութիւնը»[14]:

Ամսագրի հենց առաջին համարում Ա. Արասխանյանը խոստանում է, որ հեռու կմնա մոլեռանդ հայհոյախոսությունից, հարգանք կունենա գրականության հանդեպ, կառաջնորդվի ուղղամտությամբ: Ուսումնասիրողները «Մուրճը» համարում են հայ ազատականության գաղափարների մունետիկ ու սփռող, բայց շեշտում են, որ պարբերականի էջերում իրենց կարծիքն ու շահերը արտահայտելու հնարավորություն ունեին մտավորականության, բանվորության ու առեւտրաարդյունաբերական դասի ներկայացուցիչները. «...սակայն բոլոր դեպքերում այդ շահերը քննության են առնվում կապիտալիստական հասարակության...սահմաններում»[15]:

«Տարազ» ամսագրի 1900 թվականի համարներից մեկում կարդում ենք. «Մուրճը» գրականութեան անկեղծ ու անաչառ բարեկամների համար միշտ հետաքրքիր է եղել իր բովանդակութեամբ եւ մանաւանդ ամբողջ հայ ընթերցող հասարակութեան կողմից ճանաչուած շիտակութեամբ եւ ազնուութեամբ»[16]:

«Մուրճի» կյանքն այն տարիների չափանիշներով բավականին երկար էր՝ 12 տարի, 1889 հունվարից մինչեւ 1900-ի հունիս: Այս «երկարակեցությունը» Ա. Արասխանյանի համառ նվիրումի արդյունք էր: Տպագրության նյութական հոգսերը ուղեկցել են Ա. Արասխանյանին առաջին համարից սկսած: Բաժանորդների թիվը փոքր էր, եւ այդ միջոցները չէին կարող փակել ծախսերը: Այդ է պատճառը, որ 1898-ին նա ստիպված էր հրաժարվել իր հիմնած սիրելի ամսագրից: 1901-ից «Մուրճի» տպագրությունը վերսկսվում է հրատարակիչ եւ ժամանակավոր խմբագիր Կ. Կրասիլնիկյանի ստորագրությամբ:

Դեռեւս Թիֆլիսի գիմնազիայում ուսանելու տարիներին Ա. Արասխանյանը մտահղանում է գրական գործունեությամբ զբաղվող հեղինակներին սատարելու նպատակով հիմնել ընկերություն եւ հիմնադրամ: Բայց այս գաղափարը կյանքի կոչել չհաջողեց: Համանման մի միտք փորձել է իրագործել Փարիզում: Նա «գործուն մասնակցություն է ցուցաբերել Հայկազյան ուսումնասիրաց ընկերության ստեղծման աշխատանքներին, որի նպատակն էր սատարել որբ ու մանուկ հայորդիներին՝ կրթություն ստանալիս»[17]:

Ա. Արասխանյանը համոզված էր, որ գրականության մշակները երեք կարգի աջակցության են կարոտ. դասակարգի պատիվը պաշտպանող ընկերական դատարանի, դասակարգի մտավոր զարգացմանը նպաստող գրական ու գիտական ընկերության, եւ դասակարգի նյութական ապահովությունը հոգացող հիմնադրամի[18]: Առավել մտահոգողը վերջին պարագան էր: Եւ Ա. Արասխանյանը ձեռնամուխ եղավ գործուն քայլերի: Նրա ջանքերով ստեղծվեց Կանոնադրություն մշակող հանձնաժողով, որը բաղկացած էր վեց հոգուց: Այս նախաձեռնությունը, անշուշտ, ուներ հակառակորդներ, սակայն, անհամե-

14 **Գ. Գ. Անանյան**, նշվ. աշխ., էջ 23:
15 **Ռ. Ն. Մարինյան**, նշվ. աշխ., էջ 91:
16 «Տարազ», 1900, թ. 50:
17 **Գ. Գ. Անանյան,** նշվ. աշխ., էջ 15:
18 Տես «Մուրճ», 1892, թ. 5:

մատ ավելի մեծաթիվ էին կողմնակիցները. «Հայոց հասարակութիւնն այն աստիճան ինքնաճանաչութեան է հասել, որ գիտէ գնահատել իր ազնիւ ու տաղանդաւոր գործիչներին»[19], - կարդում ենք «Մշակի» էջերում:

Բայց պատմության հերթական ծանր ժամանակաշրջանն էր ապրում մեր ժողովուրդը՝ կոտորածներ, ազգային մշակույթի դեմ ցարիզմի հարուցած արգելքներ, հալածանքներ: Եւ նախաձեռնությունը հաջողությամբ չպսակվեց:

Մատթեոս Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Էջմիածին ժամանելուց հետո Ա. Արասխանյանը հրավեր է ստանում Գեորգյան ճեմարանում քաղաքատնտեսություն եւ ընդհանուր պատմություն դասավանդելու համար[20]: Նա գալիս է Էջմիածին, ուր բացի ուսուցչությունից, Կաթողիկոսի կողմից նշանակվում է միայն մեկ տարի գոյություն պահպանած Կեդրոնական Ուսումնական Հանձնաժողովի անդամ: Այս հանձնախմբում նա ընտրվում է քարտուղար եւ Վեհափառի առջեւ զեկուցող: «...Արասխանեանցը դրանով միայն մի աւելորդ առիթ ձեռք բերաւ էջմիածնական անթափանցելի մթնոլորտի հետ աւելի մօտ ծանօթանալու համար, որի մասին նա առաջ միայն ի լրոյ գիտէր: ... Ուսուցիչ մնաց նա ճեմարանում հազիւ երկու տարի (1909-11 թթ.)»[21]: Թերեւս տարաձայնությունների բուն պատճառը ազգային, հայեցի, դասական կրթության (որի պահապանը, կրողն ու խորհրդանիշն էր Մայր Աթոռը) ու եւրոպական արժեքների սերմանման ոլորտում պետք է փնտրել:

Սակայն, վերադառնալով ճեմարանական կրթության նրբություններին, կամենում ենք մեջբերել «Նոր դպրոց» ամսագրից, որի 1909 թվականի համարներից մեկում կարդում ենք, թե սեպտեմբերի 26-ին Մայր Աթոռում նշել են Գեորգյան ճեմարանի 35 ամյակը: Հանդիսության ժամանակ ելույթ ունենալով, «պայծառ գոյներով նկարագրելով խաւարի եւ լոյսի, քաղաքակրթութեան եւ տգիտութեան կռիւը, կաթողիկոսը շեշտեց, թէ ուսումը լոյս է, որին ձգտում են քաղաքակիրթ ազգերը, նրան պէտք է ձգտեն եւ հայերը...»[22]:

Ա. Արասխանյանը եւս, ելույթ է ունեցել եւ խոսել է ճեմարանի դերի ու նշանակության մասին. նա «...առանձնապէս կանգ առաւ այն մեծ դերի մասին, որ ունեցել է ճեմարանս իր գոյութեան օրից սկսած մինչեւ հիմա...»[23]:

Հայաստանի ազգային արխիվում պահվող վավերագրերի շարքում հետաքրքրական են Գեորգյան հոգեւոր ճեմարանի մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունները, որոնք վկայում են, որ 1909-11 թթ. Ա. Արասխանյանը կանոնավոր մասնակցել է նիստերին, նախաձախնդրորեն, երբեմն անհաշտ արտահայտել ու պաշտ-

19 «Մշակ», 1892, թ. 45:

20 Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Բագրատ վարդապետին՝ 1910 թ. սեպտեմբերի 6-ին, ուղղված «զեկուցման» մեջ Ա. Արասխանյանը գրում է, թե եղել է նաեւ «սրապիստիկա» առարկան դասավանդելու պայմանավորվածություն. «...բայց ինչ-ինչ նկատառումներով չեն իրականացնում»: Նա դժգոհում է նաեւ, որ կրճատվել են ընդհանուր պատմություն առարկայի դասաժամերը. «...որը խոչընդոտում է առարկայի լիարժէք ուսուցումը»: ՀԱԱ, ֆ. 312, ց. 1, գ. 63, թ. 196:

21 **Աւետիք Արասխանեանց**, Ինքնակենսագրութիւն, էջ 8. **Ռ. Ն. Սարինյան**, նշվ. աշխ., էջ 18:

22 «Նոր դպրոց» ամսագիր, Թիֆլիս, 1909, թ. 6-7, էջ 140-141:

23 Անդ:

պանել է իր կարծիքն ու դիրքորոշումը[24] քննարկվող հարցերի մասին: Օրինակ, պահանջում էր, որ դասավանդվող առարկաները անպատճառ ավարտվեն քննությամբ[25], որ դասավանդվի լատիներեն՝ թեկուզ սեղմ ժամաքանակով՝ ինչպես անում են «կլասիկ լիցէյներում»[26]: Նա պայքարում ու կարեւորում էր, որ աշակերտները շարադրությունները գրեն վայելուչ ձեռագրերով, հանգամանք, որ այն տարիներին երկրորդական չէր: Հատկանշական է, որ մանկավարժական խորհրդի այն նիստերի արձանագրությունները, որոնք գրել է Ա. Արասխանյանը՝ իբրեւ քարտուղար, աչքի են ընկնում կոկիկ, խնամված, ընթեռնելի ձեռագրով, անթերի շարադրությամբ:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանում նույնպես Ա. Արասխանյանցը փորձեց հրատարակչական գործունեություն ծավալել, բայց ապարդյուն: 1911 թ. փետրվարի 23-ի արձանագրության մեջ կարդում ենք. «Այն կարծիքն յայտնուեց, որ գրուածները լինին գիտական (լայն մտքով), քանի որ մեր կեանքում հայագիտութեան զարգացման նպաստող գործոններ շատ կան, մինչդեռ, գիտութիւնը աւելի քիչ միջոցներ ունի մեզանում զարգանալու համար»[27]: Քննարկման մասնակիցները համակարծիք էին, որ հանդեսին կարող են հեղինակել եւ՛ ճեմարանականները, եւ՛ «դրսից»: Նրանք գտնում էին, որ պետք է հրատարակվի «Հայագիտական հանդէս կամ ժողովածու բառիս լայն իմաստով, որի մէջ մտնում են Հայաստանի ու հայ կեանքի հետ կապ ունեցող բոլոր գիտութիւնները՝ պատմութիւն, աշխարհագրութիւն, հնախօսութիւն, գրականութիւն, ազգագրութիւն, ճարտարապետութիւն, գեղարուեստ, երաժշտութիւն եւ այլն»[28]:

1910-11 ուսումնական տարին ավարտվելուն պես Ա. Արասխանյանը մեկնում է Էջմիածնից:

Ա. Արասխանյանը մահացավ 1912 թ. դեկտեմբերի 3-ին Ախալքալակում, որտեղ ավագ ուսուցչի պաշտոն էր վարում: Անհիմն հալածանքներից, բանսարկություններից խուսափելով՝ մեկուսացավ: Անշուշտ, մահից հետո ներբողներ նվիրողները չզլացան հիշել, որ նա «գրական ու հասարակական կյանքի ականավոր ներկայացուցիչ էր», անգամ՝ «մտավոր կորիֆէյ»... Մինչդեռ, նա իր ողջ գործունեության ընթացքում խուսափում էր հոբելյաններ նշելուց, աղմկալից հանդիսություններից ու հաճախ էր կրկնում, թե միայն ճառերով չէ, որ պետք է սատարենք մտավորականներին: Նրանց առաջին հերթին նյութական լուրջ աջակցություն է պետք:

24 1911 թ. մայիսի 31-ի արձանագրության մեջ կարդում ենք. «Դր. Արասխանեանց խնդրեց արձանագրել, որ այս նիստում եղած այս կարգի խնդիրների վերաբերմամբ նա մնացել է մեր նախկին որոշումը անփոփոխ թողնելու տեսակէտի վրայ»:

25 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 312, ց. 1, գ. 96, էջ 178:

26 Անդ, էջ 206:

27 ՀԱԱ, ֆ. 312, ց. 1, գ. 96, էջ 217:

28 Անդ, էջ 218: